

Հաստատված է՝

«Գյումրու Մ. Նալբանդյանի անվան

պետական մանկավարժական ինստիտուտ»

ՊՈԱԿ-ի գիտական խորհրդի

« 18 » հոկտեմբերի 2012թ. նիստում

Խորհրդի նախագահ՝ _____ Վ. Գրիգորյան

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

«ԳՅՈՒՄՐՈՒ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ, ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՆԵՐԲՈՒՀԱԿԱՆ ԿՐԹԱԹՈՇՈՇԱԿՆԵՐԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- 1.1. Մույն Կանոնակարգը սահմանում է «Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ ԳՊՄԻ) ուսման վարձավճարի լրիվ կամ մասնակի փոխհատուցման ձևով ուսանողական նպաստների, պետական և ներքուհական կրթաթոշակների տրամադրման կարգը և պայմանները:
- 1.2. Մույն Կանոնակարգի իրավական հիմքերն են «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ, 6-րդ հոդվածի 4-րդ կետերի, 17-րդ հոդվածի 3-րդ կետի 7-րդ ենթակետի և 26-րդ հոդվածի 6-րդ կետի դրույթները, ՀՀ Կառավարության 2006թ. հունիսի 27-ի թիվ 1183-Ն որոշումը, ԳՊՄԻ-ի Կանոնադրությունը և այլ իրավական ակտերը:
- 1.3. Մույն Կանոնակարգը սահմանում է ուսանողական նպաստներ, պետական և ներքուհական կրթաթոշակներ հատկացնող ինստիտուտի մանդատային և ֆակուլտետային հանձնաժողովների ձևավորման կարգը և գործառույթները:
- 1.4. Մույն Կանոնակարգի դրույթները տարածվում են բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով առկա ուսումնառության համակարգում սովորող ուսանողների վրա:

2. ԳՊՄԻ-Ի ՖԱԿՈՒԼՏԵՏՍՅՈՒՆ ԵՎ ՄԱՆԴԱՏՍՅՈՒՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄՆ ՈՒ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

- 2.1. Ուսանողական նպաստներ, պետական և ներքուհական կրթաթոշակներ հատկացնող ֆակուլտետային հանձնաժողովը ձևավորվում է ֆակուլտետի խորհրդի կողմից: Հանձնաժողովի կազմում ընդգրկվում են ֆակուլտետի դեկանը, դեկանի տեղակալը, ուսանողական խորհրդի նախագահը՝ ի պաշտոնե, և մասնագիտական ամբիոնների ներկայացուցիչներ՝ ամբիոնների ներկայացմամբ:
- 2.2. Ինստիտուտի մանդատային հանձնաժողովի կազմում ընդգրկվում են ԳՊՄԻ-ի պրոռեկտորները, հաշվապահը, իրավաբանը և ուսանողական խորհրդի նախագահը: Կազմը հաստատվում է ԳՊՄԻ-ի ռեկտորի հրամանով:
- 2.3. Ֆակուլտետային հանձնաժողովը իրականացնում է մրցույթ և դրա արդյունքների հիման վրա կազմում է ուսման վարձավճարի լրիվ փոխհատուցման իրավունք ստացած ուսանողների ցուցակը, որը պարտադիր վավերացվում է ֆակուլտետային հանձնաժողովի բոլոր անդամների կողմից: Ցուցակի կազմման համար ձևակերպվում է արձանագրություն (2 օրինակից), որտեղ գրանցվում են մանդատային հանձնաժողովի անդամների կողմից արտահայտված կարծիքները և հնարավոր վերապահումները: Արձանագրությունը և մրցութային ցուցակը ստորագրվում են ֆակուլտետային հանձնաժողովի նախագահը և անդամները:
- 2.4. Ինստիտուտի մանդատային հանձնաժողովը քննարկում և վերջնականորեն հաստատում է ֆակուլտետների դեկանների կողմից ներկայացվող 2.3 կետում նշված ցուցակները:
- 2.5. Մույն Կանոնակարգի 2.3 կետում նշված ցուցակներում անճշտություններ, վրիպումներ, սխալներ, ինչպես նաև ցուցակների կազմման ընթացակարգի այլ խախտումներ հայտնաբերվելու դեպքերում ինստիտուտի մանդատային հանձնաժողովն իրավասու է տվյալ մասնագիտության ուսման վարձավճարի լրիվ փոխհատուցման իրավունք ունեցող ուսանողների ցուցակը հետ վերադարձնելու տվյալ ֆակուլտետ՝ նոր մրցույթ կազմակերպելու պահանջով:

Միակներ և ընթացակարգի խախտումներ թույլ տված անձինք ենթակա են կարգապահական տույժերի, որոնք ձևակերպվում են ինստիտուտի ռեկտորի հրամանով:

3. ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՀՍՏԿԱՑՈՒՄԸ

- 3.1. Ուսանողական նպաստը փոխհատուցում է (լրիվ կամ մասնակի) ուսանողի ուսման վճարը՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի ծախսային մասում նախատեսված միջոցների, ԳՊՄԻ-ի ֆինանսական միջոցների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրների հաշվին:

3.2. Ուսանողական նպաստի ձևով ուսման վարձավճարի լրիվ փոխհատուցում պետության կողմից տրամադրվում է.

3.2.1. մեկ ուսումնական տարվա ընթացքում սահմանված ժամկետներում հանձնված քննությունների և ստուգարքների արդյունքներով առավել բարձր առաջադիմություն ունեցող ուսանողներին՝ մրցութային կարգով: Մրցութային անցկացվում է նախորդող ուսումնական տարվա միջին որակական գնահատականի (ՄՈԳ-ի) հիման վրա: ՄՈԳ-ը հաշվարկվում է ԳՊՄԻ-ում գործող գիտելիքների գնահատման սանդղակի կիրառմամբ՝ հարյուրերորդականի ճշտությամբ: Հավասար ցուցանիշների դեպքում միավորները հաշվարկվում են առանց կլորացման: Ուսումնական տարվա քննությունների արդյունքում միևնույն պայմանների դեպքում հավասար միավորներ ունեցող երկու և ավելի ուսանողների պարագայում՝ 2-րդ կուրսում առավելությունը տրվում է 1-ին կուրսի վերջին կիսամյակի քննաշրջանի արդյունքում առավել բարձր առաջադիմություն ցուցաբերած ուսանողներին, հաջորդ կուրսերում՝ նախորդ տարվա, իսկ վերջինիս հավասարության դեպքում՝ դրան նախորդող ուսումնական տարվա քննությունների արդյունքներով առավել բարձր առաջադիմություն ցուցաբերած ուսանողներին: Ըստ առաջադիմության (այսինքն՝ ըստ ՄՈԳ-ի) ձևավորվում է տվյալ մասնագիտության տվյալ կուրսի ուսման վարձավճարի լրիվ փոխհատուցման իրավունք ունեցող ուսանողների ցուցակը (**լրամշակված՝ 22.10.2015թ.**):

3.2.2. Օրենքով նախատեսված հետևյալ սոցիալական խմբերում ընդգրկված անձանց՝

3.2.2.1. առանց ծնողական խնամքի մնացած ուսանողներին՝ համաձայն «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի,

3.2.2.2. 1-ին և 2-րդ խմբերի հաշմանդամներին և հաշմանդամ երեխայի կարգավիճակ ունեցող անձանց՝ համաձայն «Հայաստանի Հանրապետության հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի,

3.2.2.3. զոհված զինծառայողի երեխա-ուսանողներին՝ համաձայն «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի,

3.2.2.4. պարտադիր ժամկետային զինվորական ծառայության ընթացքում հաշմանդամ դարձած ուսանողներին՝ համաձայն «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի,

3.2.2.5. պետության համար առաջնահերթություն և կարևորություն ներկայացնող մասնագիտություններով նպատակային ուսուցմամբ ընդունված ուսանողներին:

ՀՀ Կառավարության կողմից հատկացված անվճար տեղերի հաշվին ընդհանուր մրցութից դուրս ընդունված պարտադիր ժամկետային զինվորական

ծառայությունից գորացրված ուսանողները՝ որպես նպատակային ուսուցմամբ ընդունվածներ, օգտվում են իրենց արտոնությունից մինչև ուսման ավարտը:

- 3.3. Սույն Կանոնակարգի 3.2.2.1., 3.2.2.3. և 3.2.2.5. ենթակետերում նշված անձանց ուսանողական նպաստի ձևով ուսման վարձավճարի լրիվ փոխհատուցում տրամադրվում է 1-ին կուրսից սկսած մինչև տվյալ կրթական ծրագրով ուսումնառության ավարտը:
- 3.4. Սույն Կանոնակարգի 3.2.2.2. և 3.2.2.4. ենթակետերում նշված անձանց ուսանողական նպաստի ձևով ուսման վարձավճարի լրիվ փոխհատուցում տրամադրվում է առաջին կուրսի սկզբում՝ համապատասխան փաստաթղթերի առկայության դեպքում, և պարտադիր կարգով վերանայվում է յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբում:
- 3.5. ՀՀ Կառավարությունը յուրաքանչյուր տարի Հայաստանի հանրապետության տվյալ տարվա պետական բյուջեով բարձրագույն ուսումնական հաստատությունների համար նախատեսված միջոցների սահմաններում, ըստ բուհերի և մասնագիտությունների, բաշխում է պետության կողմից տրվող ուսանողական նպաստների քանակը, որը տեղափոխվում է կուրսից կուրս (ըստ բուհ ընդունված ուսանողների քանակի) **(լրամշակված՝ 22.10.2015թ.):**

ԳՊՄԻ-ի առաջին կուրս ընդունված ուսանողներին ուսանողական նպաստի ձևով ուսման վարձավճարի լրիվ փոխհատուցում տրամադրվում է Հայաստանի Հանրապետության պետական բուհերի ընդունելության կանոններով սահմանված կարգով **(լրամշակված՝ 22.10.2015թ.):**

Հաջորդ կուրսերում վերոնշյալ ուսանողների ուսանողական նպաստը տրամադրվում է սույն կանոնակարգի 3.2.1. ենթակետում ամրագրված սկզբունքով:

- 3.6. ԳՊՄԻ-ն, «Կրթության մասին» ՀՀ օրենքի համաձայն, տվյալ ուսումնական տարում անվճար ուսուցման համակարգ ընդունված ուսանողների թվի 10 տոկոսի չափով իրենց միջոցների հաշվին ըստ առաջադիմության փոխհատուցում են վճարովի ուսուցման համակարգի ուսանողների ուսման վարձը՝ ըստ ՀՀ Կրթության պետական կառավարման լիազոր մարմնի կողմից հաստատված՝ մասնագիտություններին հատկացված տեղերի քանակի: Վճարովի հիմունքներով սովորողները ուսման վարձը կարող են մուծել ըստ կիսամյակների, ըստ անհրաժեշտության՝ սահմանվում է նաև ամսական վճարման մեխանիզմներ: Բուհի վճարովի համակարգի ուսանողական համակազմի առնվազն տասը տոկոսին՝ ուսանողների վարձավճարներից գոյացած բյուջեի առնվազն 7 տոկոսի չափով, իր միջոցների հաշվին՝ ուսանողի սոցիալական վիճակի և բարձր առաջադիմության արդյունքների հաշվառմամբ, համապատասխան փաստաթղթերի ներկայացման դեպքում, ուսման վարձավճարն ուսանողական նպաստի ձևով մասնակի փոխհատուցում է (մասնակի զեղչերի կիրառմամբ) հետևյալ կարգավիճակ ունեցող անձանց **(լրամշակված՝ 22.10.2015թ.):**

- 3.6.1. ա) սոցիալապես անապահով (ընտանիքների անապահովության սահմանային միավորից բարձր միավոր ունեցող ընտանիքների) ուսանողներ,

բ) սոցիալապես անապահով (ընտանիքների անապահովության գնահատման համակարգում 0 միավորից բարձր միավոր ունեցող ընտանիքների) ուսանողներ (լրամշակված՝ 22.10.2015թ.),

3.6.2. միակողմանի ծնողագուրկ (միածնող) ուսանողներ,

3.6.3. երեք և ավելի անչափահաս, կամ երեք և ավելի ուսանող երեխա ունեցող ընտանիքների ուսանողներ,

3.6.4. վճարովի ուսուցման համակարգում երկու և ավելի ուսանող-երեխա ունեցող ընտանիքների ուսանողներ,

3.6.5. 1-ին կամ 2-րդ խմբերի հաշմանդամ ծնող, այդ թվում՝ հաշմանդամ ազատամարտիկ ծնող ունեցող ուսանողներ,

3.6.6. հեռավոր լեռնային և սահմանամերձ գյուղերի հանրակրթական դպրոցների ուսուցիչների երեխա ուսանողներ,

3.6.7. մինչև մեկ տարեկան երեխա ունեցող ուսանողներ,

3.6.8. մարզական և ստեղծագործական ակնառու հաջողություն ունեցած ուսանողներ,

3.6.8.1. Աշխարհի, Եվրոպայի, Օլիմպիական խաղերի մրցանակակիր,

3.6.8.2. Հայաստանի չեմպիոն,

3.6.8.3. արտասահմանյան կամ հանրապետական մենահամերգ կամ ցուցահանդես ունեցած ուսանողներ,

3.6.8.4. միջազգային կամ հանրապետական ուսանողական առարկայական օլիմպիադաների մրցանակակիր,

3.6.8.5. միջազգային կամ հանրապետական ՈԻԳԸ գիտաժողովի մրցանակակիր,

3.6.9. ԳՊՄԻ-ի աշխատակիցների՝

3.6.9.1. ինստիտուտում մրցութապայմանագրային կարգով առնվազն 5 տարի աշխատած դասախոսի երեխա,

3.6.9.2. ինստիտուտում դասախոսական աշխատանքի հրավիրված և հրամանով 10 տարի աշխատողի երեխա,

3.6.9.3. 10 և ավելի տարի ինստիտուտի ուսումնաօժանդակ, վարչատնտեսական աշխատակազմի աշխատակցի երեխա:

3.6.10. 2009 թվականին և դրանից հետո հեռակա ուսուցման համակարգ ընդունված և գյուղական դպրոցներում 1 տարուց ավելի ուսուցիչ աշխատող ուսանողներին, իսկ մինչև 2009 թվականը ընդունված ուսուցիչ-ուսանողների համար ուսման վճարը հավասարեցվում է նպատակային ուսուցմամբ ընդունված ուսանողների ուսման վճարին:

- 3.6.11. Ուսանողական նպաստի ձևով ուսման վճարի լրիվ փոխհատուցման համար անցկացված փոխատեղման մրցույթի արդյունքում 0,1 միավոր տարբերությամբ դուրս մնացած առավել բարձր առաջադիմություն (տարեկան ՄՈԳ-ը 86 և ավելի) ունեցող ուսանողներ **(լրամշակված՝ 22.10.2015թ.)**:
- 3.6.12. Մարտական հերթապահություն իրականացնող զորամասերում մարտական հերթապահության մեջ ընդգրկված պարտադիր ժամկետային զինվորական ծառայություն անցած ուսանողներ:
- 3.6.13. 18 տարին լրանալուց հետո առանց ծնողական խնամքի մնացած ուսանողներ՝ մինչև 23 տարին լրանալը **(լրամշակված՝ 22.10.2015թ.)**:
- 3.6.14. 23 տարին չլրացած միակողմանի ծնողագուրկ (միածնող) ուսանողներ **(լրամշակված՝ 22.10.2015թ.)**:
- 3.6.15. Առանձնահատուկ դեպքերում ԳՊՄԻ-ի ռեկտորի առաջարկությամբ և ինստիտուտի մանդատային հանձնաժողովի որոշմամբ՝ այլ կարգավիճակ ունեցող ուսանողներ:
- 3.7. Սույն Կանոնակարգի 3.6. կետում նշված կարգավիճակ ունեցող անձանց ուսանողական նպաստի ձևով ուսման վարձավճարի մասնակի փոխհատուցման չափը սահմանվում է.
- 3.7.1. 3.6.2., 3.6.6., 3.6.7., 3.6.8.1, 3.6.8.3, 3.6.8.4, 3.6.8.5, 3.6.9 ենթակետերում նշված ուսանողների համար՝ մինչև 80% (եթե վերջին քննաշրջանի արդյունքներով բակալավրիատում ՄՈԳ-ը 71 և ավելի միավոր է, իսկ մագիստրատուրայում՝ 76 և ավելի միավոր է) և մինչև 50% (եթե վերջին քննաշրջանի արդյունքներով բակալավրիատում ՄՈԳ-ը ցածր է 71-ից, մագիստրատուրայում՝ 76-ից) **(լրամշակված՝ 22.10.2015թ.)**:
- 3.7.2. 3.6.4., 3.6.8.2 և 3.6.10 ենթակետերում նշված ուսանողների համար՝ մինչև 30%:
- 3.7.3. 3.6.1., 3.6.3., 3.6.5., 3.6.12. ենթակետերում նշված ուսանողների համար՝ առնվազն 30% **(լրամշակված՝ 22.10.2015թ.)**:
- 3.7.4. 3.6.7., 3.6.11, 3.6.13, 3.6.14 ենթակետերում նշված ուսանողների համար՝ առնվազն 50% **(լրամշակված՝ 22.10.2015թ.)**
- 3.7.5. 3.6.15. ենթակետում նշված առանձնահատուկ դեպքերում՝ ԳՊՄԻ-ի մանդատային հանձնաժողովի որոշմամբ:
- 3.8. Երկու և ավելի կարգավիճակների համապատասխանող ուսանողների համար կիրառվում է մասնակի փոխհատուցման առավելագույն չափ նախատեսող կետը:
- 3.9. Անհարգելի պատճառներով («անբավարար» գնահատական/չստուգված ստանալու կամ անհարգելի պատճառով քննությանը/ստուգարքին չներկայանալու դեպքերում ակադեմիական պարտքերի մարման շրջանում քննություններ/ստուգարքներ հանձնած ուսանողներն ուսման վարձավճարի մասնակի փոխհատուցման իրավունքից չեն օգտվում:

3.10. Սույն Կանոնակարգի 3.6 կետի համաձայն՝ ուսման վարձավճարի մասնակի փոխհատուցման վերաբերյալ դիմումներն ընդունվում են առկա ուսումնառության համակարգում սովորող ուսանողների դեպքում՝ յուրաքանչյուր կիսամյակի առաջին չորս շաբաթների ընթացքում, իսկ հեռակա ուսումնառության համակարգում՝ դասերի փաստացի սկսվելուց հետո երկու շաբաթվա ընթացքում:

3.11. Ուսումնառությունն ընդհատած (առողջական վիճակի պատճառով ակադեմիական արձակուրդում գտնվելու, ժամկետային զինծառայության գորակոչվելու, ուսանողական փոխանակման ծրագրերով արտասահման ուսումնառության գործուղվելու կապակցությամբ, հղիության և ծննդաբերության, ինչպես նաև մինչև 3 տարեկան երեխայի խնամքի դեպքերում) ուսանողն ուսանողական իրավունքները վերականգնելիս պահպանում է նախկինում ունեցած ուսանողական նպաստ ստանալու իրավունքը (ՀՀ պետական բյուջեով նախապես ուսանողական նպաստ ստացողների ընդհանուր թվաքանակի շրջանակներում) **(լրամշակված՝ 22.10.2015թ.):**

Վերջին հանգամանքը պարտադիր կարգով նշվում է ուսումնառության ընդհատման վերաբերյալ հրամանում:

Ուսանողական նպաստի ձևով ուսման վարձավճարի լրիվ փոխհատուցման իրավունքից օգտվող ուսանողի կողմից հարգելի պատճառով ուսումնառությունն ընդհատելու դեպքում ազատված ուսանողական նպաստը նույն կուրսում տվյալ ուսումնական տարում չի օգտագործվում և հետագայում ավելացվում է այն կուրսի տվյալ ուսումնական տարվա ուսանողական նպաստներին, որտեղ ուսանողը վերականգնում է իր ուսանողական իրավունքները:

3.12. Այլ պատճառներով ուսումնառությունն ընդհատած, այլ բուհերից, ԳՊՄԻ-ի այլ մասնագիտություններից կամ հեռակա ուսումնառության համակարգից առկա ուսումնառության համակարգ տեղափոխված ուսանողներն ուսման վարձավճարի լրիվ փոխհատուցման իրավունքից կարող են օգտվել ԳՊՄԻ-ի (տվյալ մասնագիտությունում) առկա ուսուցման համակարգում մեկ ուսումնական տարի(2 կիսամյակ) սովորելուց հետո, իսկ ուսման վարձավճարի մասնակի փոխհատուցման իրավունքից՝ մեկ կիսամյակ սովորելուց հետո:

3.13. Առաջին կուրսի ուսանողները ուսման վարձավճարի մասնակի փոխհատուցման իրավունքից կարող են օգտվել միայն ուսումնառության երկրորդ կիսամյակից **(լրամշակված՝ 22.10.2015թ.):**

3.14. ա) Սույն Կանոնակարգի 3.2.1. ենթակետում (լրիվ փոխհատուցում) նշված ուսանողների դիմումները ընդունվում են տվյալ ուսումնական տարվա յուրաքանչյուր կիսամյակի ուսումնական պարապմունքների սկզբին նախորդող և հաջորդող 2 շաբաթների ընթացքում, իսկ ցուցակը կազմվում է մինչև յուրաքանչյուր տարվա սեպտեմբերի 25 **(լրամշակված՝ 22.10.2015թ.):**

բ) 3.6. կետի բոլոր ենթակետերում (մասնակի փոխհատուցում) նշված ուսանողների ցուցակը կազմվում է մինչև տվյալ ուսումնական տարվա յուրաքանչյուր կիսամյակի

ուսումնական պարապմունքների սկզբին նախորդող և հաջորդող երեք շաբաթների ընթացքում (լրամշակված՝ 22.10.2015թ.):

- 3.15. Սույն Կանոնակարգի 3.14 կետում նշված ցուցակը ֆակուլտետի դեկանի կողմից ներկայացվում է ֆակուլտետի հանձնաժողովի քննարկմանը մինչև յուրաքանչյուր տարվա սեպտեմբերի 20-ը՝ մրցույթ անցկացնելու համար:
- 3.16. Սույն Կանոնակարգի 3.15 կետում նշված ցուցակները և արձանագրությունները մինչև յուրաքանչյուր տարվա սեպտեմբերի 25-ը ֆակուլտետների դեկանների կողմից ներկայացվում են ինստիտուտի մանդատային հանձնաժողովի քննարկմանը և վերջնական ամփոփմանը:
- 3.17. Ինստիտուտի մանդատային հանձնաժողովի կողմից ամփոփված ցուցակները մեկօրյա ժամկետում հրապարակվում են ֆակուլտետներում (փակցվում են յուրաքանչյուր ֆակուլտետի հրամանների և հայտարարությունների ցուցատախտակին, տեղադրվում ինստիտուտի կայքում): Ցուցակների վերաբերյալ դիմում-բողոքները երեք աշխատանքային օրվա ընթացքում պետք է ներկայացվեն ինստիտուտի մանդատային հանձնաժողովին: Նշված ժամկետի ավարտից հետո ինստիտուտի մանդատային հանձնաժողովը քննարկում է ներկայացված դիմում-բողոքները (եթե այդպիսիք կան), հաստատում է ուսանողական նպաստի ձևով ուսման վարձավճարի լրիվ փոխհատուցում ստացող ուսանողների վերջնական ցուցակները և այն հրամանագրման նպատակով ներկայացնում է ԳՊՄԻ-ի ռեկտորին:

ԳՊՄԻ-ի ռեկտորի հրամանով ուսման վարձավճարի լրիվ փոխհատուցում ստացող ուսանողների հրամանագրումից հետո ուսանողների՝ այլ ուսումնական հաստատություն կամ այլ ֆակուլտետ տեղափոխվելու, ինչպես նաև ինստիտուտից ազատվելու դեպքերում ազատված ուսանողական նպաստներն այլ ուսանողների չեն տրամադրվում:

ԳՊՄԻ-ի ռեկտորի հրամանում պարտադիր կարգով նշվում է նպաստի տրամադրման ժամկետը՝ տվյալ տարվա սեպտեմբերի 1-ից մինչև հաջորդ տարվա օգոստոսի 31-ը:

- 3.18. Ուսանողական նպաստի ձևով ուսման վարձավճարի լրիվ փոխհատուցման իրավունք ունեցող ուսանողների վերաբերյալ բոլոր հրամանների պատճենները կից գրությամբ՝ էլեկտրոնային կրիչով, ուղարկվում են Հայաստանի Հանրապետության Կրթության և գիտության նախարարություն, որի կողմից էլ իրականացվում է վերահսկողությունն ուսանողական նպաստների հատկացման գործընթացի նկատմամբ:

4. ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԿՐԹԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՀԱՏԿԱՑՈՒՄԸ

- 4.1. Պետական կրթաթոշակը պետական ֆինանսական օժանդակություն է «գերազանց» և «լավ» (ՄՈԳ-ը՝ 71 և ավելի միավոր) առաջադիմություն ցուցաբերած, հասարակական ակտիվ դիրքորոշում ու պատշաճ վարքագիծ դրսևորած ուսանողներին՝ ֆինանսական խրախուսանքի ձևով:

4.2. Ուսանողների հասարակական ակտիվ դիրքորոշումը բնութագրվում է ստորև նշվող ցուցանիշներով՝

4.2.1. մասնակցությունն ֆակուլտետի և ինստիտուտի ուսանողական կյանքին, հասարակական աշխատանքներին,

4.2.2. զեկուցումներ, ռեֆերատներ, հրատարակված աշխատանքներ (գիտական ամսագրերում և զանգվածային լրատվության միջոցներում),

4.2.3. մասնակցությունն միջբուհական, քաղաքային, հանրապետական և միջազգային մրցույթներին, օլիմպիադաներին, ուսանողական գիտական նստաշրջաններին,

4.2.4. ֆակուլտետի կամ ինստիտուտի ղեկավարության մեկանգամյա կամ բազմակի հանձնարարականների բարեխղճորեն և ժամանակին կատարում, որն ունի արձանագրված հիմք:

4.3. Ուսանողների պատշաճ վարքագիծը դրսևորվում է նրանց կողմից ինստիտուտի ներքին կարգապահության կանոնների խստիվ պահպանմամբ: Նշված կանոնների խախտման առիթով ռեկտորի, պրոռեկտորների կամ ֆակուլտետի ղեկանի կողմից տրված նկատողության հրամանները հիմք են պետական կրթաթոշակ չհատկացնելու համար:

4.4. Յուրաքանչյուր տարի ԳՊՄԻ-ի պետական կրթաթոշակների թվաքանակը և չափը հաստատում է ՀՀ կառավարությունը՝ տվյալ տարվա Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով ինստիտուտին հատկացված միջոցների սահմաններում: ԳՊՄԻ-ում պետական կրթաթոշակների հատկացման և հրամանագրման գործընթացը կազմակերպվում է սույն Կանոնակարգի 2-րդ բաժնում նշված ինստիտուտի ֆակուլտետային մանդատային հանձնաժողովների միջոցով՝ համապատասխան կարգով: Մրցույթի անցկացումից հետո տվյալ մասնագիտությունում ազատ պետական կրթաթոշակներ առաջանալու դեպքում դրանք կարող են վերաբաշխվել՝ ըստ առաջնահերթության՝ հետևյալ կարգով. տվյալ մասնագիտության, ֆակուլտետի մյուս մասնագիտությունների, մյուս ֆակուլտետների վրա:

4.5. Յուրաքանչյուր ուսումնական կիսամյակի ավարտին սույն կանոնակարգի 4.1-4.3 կետերում նշված պայմանների պահպանման պարագայում պետական կրթաթոշակի հատկացումը վերահաստատվում է: Թվարկված պայմանները չապահովվելու դեպքում ուսանողը զրկվում է պետական կրթաթոշակից:

Ուսումնառությունն ընդհատած (առողջական վիճակի պատճառով ակադեմիական արձակուրդում գտնվելու, ժամկետային զինծառայության գորակոչվելու, ուսանողական փոխանակման ծրագրերով արտասահման ուսումնառության գործուղվելու կապակցությամբ, հղիության և ծննդաբերության, ինչպես նաև մինչև 3 տարեկան երեխայի խնամքի դեպքերում) ուսանողն ուսանողական իրավունքները վերականգնելիս պահպանում է նախկինում ունեցած կրթաթոշակ ստանալու իրավունքը (ՀՀ պետական բյուջեով նախապես կրթաթոշակ ստացողների ընդհանուր թվաքանակի շրջանակներում) (լրամշակված՝ 22.10.2015թ.):

Վերջին հանգամանքը պարտադիր կարգով նշվում է ուսումնառության ընդհատումը ձևակերպող հրամանում:

- 4.6. ԳՊՄԻ-ն իրավասու է սեփական և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ միջոցների հաշվին սահմանելու ներբուհական, այդ թվում՝ անվանական կրթաթոշակներ:
- 4.7. ԳՊՄԻ-ի անվանական կրթաթոշակ նշանակվում է բակալավրիատի և մագիստրատուրայի առավել աչքի ընկնող, վերջին 4 կիսամյակում անընդմեջ գերազանց առաջադիմություն (մագիստրատուրայի ուսանողների դեպքում հաշվի են առնվում նաև բակալավրիատում ցուցաբերած առաջադիմության արդյունքները) և գիտական ու հասարակական ակտիվություն ցուցաբերած ուսանողներին:
- 4.8. Անվանական կրթաթոշակի հավակնորդ ուսանողների թեկնածությունները քննարկում են ֆակուլտետների մանդատային հանձնաժողովում և ներկայացվում ինստիտուտի մանդատային հանձնաժողովին: Անվանական կրթաթոշակից զրկելը կատարվում է ռեկտորի հրամանով:
- 4.9. Անվանական կրթաթոշակների տրամադրումը վերանայվում է յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբում՝ բացառությամբ այն դեպքերի, երբ անվանական կրթաթոշակ ստացող ուսանողը ուսումնական կիսամյակի ավարտին չի համապատասխանում սույն կանոնակարգի 4.8. կետով սահմանված չափանիշներին:

5. ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- 5.1. Սույն Կանոնակարգը կիրառվում է ԳՊՄԻ-ի գիտխորհրդում հաստատվելու օրվանից:
- 5.2. Ուժը կորցրած համարել 28.09.2006թ հաստատված «Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի ուսանողական նպաստների և պետական կրթաթոշակների հատկացման ընթացակարգը»: